providing efficiency for modern state policy of tax burden definition are processed and proposed. These principles are connected with the realization of RA tax legislation and tax bureaucratism, the distinguished tax regime's application, the relevant tax culture formation and the provision of economic activity level.

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱՃԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ԳՊՀ դասախոս

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացող գործընթացները միտված են ժողովրդի բարեկեցիկ կյանքի ապահովմանը, կենսամակարդակի բարձրացմանը, նորանկախ պետության առջև ծառացած սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծմանը: Թե որքանով են այդ գործընթացները նպատակաուղղված և վերջնական արդյունքում հաջողված, տեսնում են բոլորը: Բայց ոչ բոլորը կարող են լիովին պատկերացնել և ընդունել, որ իրականում հսկայածավալ աշխատանք է տարվում բարեփոխումների իրականացման ուղղությամբ: Նորանկախ պետության օրենսդիրը պետք է լուծումներ գտներ հասարակական կյանքի բոլոր ոլորտների համար, միաժամանակ խուսափելով նախկին հզոր տերության սխալը կրկնելուց: Արդյունքում, հասարակական կյանքը կանոնակարգելու համար, գրվեցին նոր օրենքներ, որոնք պարբերաբար փոփոխվում են, լրացվում, վերանայվում, դրանով իսկ որոշակի խնդիրներ առաջացնելով տնտեսավարողների համար: Այս ամենն, անշուշտ, բնորոշ է անցման ժամանակաշրջանին, սակայն առաջընթացին զուգահեռ փոփոխությունները դեռևս շարունակվում են: Երբ Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց գանձապետական համակարգը, շատերը չէին ընդունում, որ այն կգործի: Սակայն այն գործում է և կատարելագործվում, ապացուցելով նրա ստեղծման անհրաժեշտությունը: Նույնը կարելի է նշել նաև քաղաքացիական ծառայության, հետագայում՝ հանրային ծառայության մասին:

Անընդհատ փոփոխություններ են կատարվում նաև հարկային օրենսդրության և հաշվապահական հաշվառման ոլորտում: Ամենավերջին փոփոխություններով, 2013 թվականից, Հայաստանի Հանրապետությունում ընդունվեցին «Շրջանառության հարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքները: Այս օրենքներից առաջինը կնպաստի փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ և վերջիններիս կողմից վճարվելիք հարկի ցածր տոկոսադրույք: Ինչ վերաբերում է երկրորդ օրենքին, ապա նրա ընդունումով ուժը կորցրած ճանաչվեցին «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Սա ինքնին խոսում է այն մասին, որ գործատուի համար ավելի թեթև պայմաններ ստեղծվեցին՝ հաշվարկի ժամանակ երկուսի փոխարեն մեկ օրենքի կիրառում, այսինքն՝ նաև մեկ հաշվետվության, ընդ որում՝ էլեկտրոնային ներկայացում և այլն: Ընդ որում, չոտնահարվեցին նաև վարձու աշխատողների շահերը: Եկամտային հարկով հարկելիս պահպանվում է նրանց զուտ աշխատավարձը:

Հաշվապահական հաշվառման ոլորտում իրականացվող փոփոխությունները նպատակ ունեն բարեփոխումներ իրականացնել նաև հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բնագավառում:

«Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» կամ «Հանրային հատվածի ֆինանսներ» հասկացությունը բավականին ընդգրկուն է: Այն ենթադրում է պետության նպատակների իրականացման համար հանրային ունեցվածքի վերաբաշխման գործառույթի շրջանակում ֆինանսական միջոցների ձևավորման և օգտագործման հետ կապված հարաբերությունների կառավարում:

Բյուջետային ծախսերի կատարումն սկսվում է հատկացումների համակարգից: Հատկացումների համակարգի միջոցով օրենսդիր իշխանությունը՝ պետության կարիքները հոգալու նպատակով, կատարում է գործադիր մարմինների կողմից տնօրինման համար նախատեսված պետությանը պատկանող դրամական միջոցների բաշխումը: Հատկացումների համակարգը կարևոր գործիք է պետության ձեռքում՝ բաշխման ու վերաբաշխման գործառույթների իրականացումն ապահովելու համար: Պետությանը պատկանող դրամական միջոցների օգտագործումն անհնար է արդյունավետ հսկել ու վերահսկել առանց ֆինանսական համակարգի առկայության:

Հենց այդ՝ հսկման ու վերահսկման մեխանիզմի ապահովման նպատակով 1996 թվականին հանրապետությունում ներդրվեց գանձապետական համակարգը, որի շնորհիվ բյուջետային միջոցների մուտքը և բյուջետային ծախսերն իրականացվում էին միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա: Արդյունքում՝ բյուջետային տարվա ցանկացած պահի հնարավոր դարձավ ունենալ տեղեկատվություն բյուջետային միջոցների շրջանառման (մուտքի ու ելքի) վերաբերյալ:

Բոլոր մակարդակների բյուջեները հիմնված են միասնական ֆինանսական, դրամական և հարկային քաղաքականության վրա: ՀՀ պետական և տեղական բյուջեները միավորվում են հանրապետության բյուջետային համակարգում և վերջինիս ծավալը՝ իբրև հաշվարկային մեծություն, սահմանվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի միասնականությունը ապահովված է բյուջեների նախագծերի կազմման ընդհանուր սկզբունքներով, եկամուտների և ծախսերի բյուջետային դասակարգման, հաշվառման ու հաշվետվությունների համակարգի համասեռությամբ, նաև բյուջեների դրամարկղային կատարման ընդհանրությամբ:

Հայաստանի Հանրապետության պետական և պարտադիր սոցիալական ապահովության բյուջեների կազմման ու կատարման աշխատանքները բարելավելու և կատարելագործելու նպատակով 1999 թվականին ՀՀ ֆինանսների նախարարի՝ «ՀՀ բյուջետային դասակարգման մանրամասները և կիրառման կարգը հաստատելու մասին» թիվ 292 հրամանով սահմանվեցին բյուջետային ծախսերի դասակարգման չափորոշիչները՝ ըստ գերատեսչական, գործառական, տարածքային և տնտեսագիտական: Բյուջետային գործընթացների հետագա զարգացումների պահանջով 2007 թվականին ՀՀ ֆինանսների նախարարի՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5-Ն հրամանով էական փոփոխություններ կատարվե-

ցին, մասնավորապես, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներում՝ այնքան ընդլայնելով ու մանրամասնելով դրանք, որ նախկինում երկնիշ թվով այդ հոդվածները դարձան վեցանիշ, թափանցիկ դարձնելով բյուջետային ծախսերը և իրենց մեջ ընդգրկելով դասը, կատեգորիան, խումբը, սինթետիկ, անալիտիկ և ենթաանալիտիկ հաշիվները:

Փոփոխությունները, կամ ինչպես ընդունված է ասել, բարեփոխումները կատարվել են և կկատարվեն այնքան ժամանակ, քանի դեռ դրանց պահանջը զգացվում է: Երբ փոփոխությունների թիվը կամ կատարման հաճախականությունը նվազի, կարելի կլինի եզրակացնել, որ արդեն որոշակի կայունություն է արձանագրվում տնտեսության օրենսդրական, հարկային քաղաքականության մեջ, ինչին ձգտում ենք բոլորս:

THE IMPROVEMENT OF ACCOUNTANCY IN THE REPUBLIK OF ARMENIA

A. A. HAKOBYAN

This article is about the changes in the economy of Armenia and public life. After the independence of the Republic of Armenia there have been created many new laws. Year by year a great number of changes had been made in those laws to make them better. And this is characteristic for the transitional period. The more changes we have, the more powerful will be our country, and better our life finally. We hope so many changes in legislation and tax policy afterwards will promote subsequent development of economy.

РЕФОРМЫ БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. А. АКОПЯН

Статья посвящается теме изменений в бухгалтерском учете после провозглашения независимости Республики Армения. В этот период были изданы новые законы нового государства. Год за годом очень часто и много изменений происходило в этих законах, чтобы сделать их лучше. Эти изменения характерны для переходного периода. И они будут продолжаться в законодательстве и налоговой политике до тех пор, пока они способствуют развитию экономики.